

M. Archam Poste Restante
Athènes (Grèce)

ՏԱՐԵԿԱՆ Ֆրանս 4

ՎԵՏԱՄԱՍԵԱՅ . . . « 2

ՄԻՈՒԹԻՒՆ

ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ե. Տ Ա Ր Ի

ԱՅԻՆՔ

1901

Ա. Պ Ր Ի Լ

Թ Ի Ի 47

ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՈՍՏՐԵՆ

Վերակազմակալ Հնչակեան կուսակցութեան պաշտօնական օսկանին 1901 մարտի 28 թիւին մէջ մեծ հրճուանքով և ոգևորութեամբ կարդացուեցաւ «Հայ ազգը և յեղափոխութիւնը» վերնագրով Ուսթր զումարուած Ազգային Համաժողովին երգ նիստին մէջ բուէարկուած բանաձեւը, որով հարցում մը կ'ուզէին ամբողջ Հայ ժողովրդին թէ Հնչակեան կուսակցութեան դաւանած սկզբունքներէն ի՞նչ կ'ուզեն որ զոհեն ի սէր Միութեան»:

Մանրամասն և լուրջ տեսութիւն մը ընելէ առաջ խորագրիս իմաստը պարզեմ, որ ճիշդ ու ճիշդ գաղափար մը կ'աղմուէ երկու կուսակցութեան մէջ գոյացած անշրպեան և անոնց բուն յատկանշական արտայայտութիւններուն վրայ:

«Երկու ճամբորդներ ծովեզիրէ մը կ'անցանէին, անոնցմէ մին՝ նշմարեց ոստրէ մը, բայց միւս ընկերը յաջողեցաւ աւելի՝ ճարպիկ «գտնուիլ և ձեռք անցնել ոստրէն: Երբ երկու ընկեր իրարու հետ կը վիճէին և կ'ուզէին իրարու ձեռքէ խելի, տէր վիճի մը «վրայ հասնելով հարցաց ինչո՞ւ կը կռուիք»: «Անոնցմէ մին՝ կը փաստաբանէր թէ ինք առաջ տեսած էր, որով իրաւունք ունէր ոստրէին տէրն ըլլալու, միւսն ալ նոյնպէս կը «պնդէր թէ իրաւունքը իրն էր. որովհետեւ ինք «վերցուցած էր գետնէն: Տէրվիք առնելով «ոստրէն, բացաւ կեղևները, կերաւ մէջինը և երկու կեղևները բաժնեց երկու կռուող-ներուն»:

Ճիշդ ժամանակն է հաստատելու թէ՛ երկու կուսակցութիւններն ալ նմանօրինակ ծիծաղելի զրութեան մէջ կը գտնուին տարբեր տարբեր սկզբունքներու վրայ հիմնած իրենց ծրագիրները, և կ'ուզեն ժողովրդին տրամադրութիւնը խել իրարու ձեռքէ. մինչդեռ անգիր (աւելի) թուրք բռնակալութիւնն, առիթէն աւելի օգտուած՝ կը ջարդէ, կը կողոպտէ և կը խմէ թշուառ ժողովրդին արիւնը...

Հինգ երկաթ տարիներէ ի վեր հրապարակաւ կը կը յուզեն ժողովրդին պահանջած զոհողութիւնները. բայց «բանաձեւ բուէարկող» հայրենասէրները, իրենք իրենց մէջ կ'զդիացած՝ բոլորովին անտեղեակ ձեռնալուծ ժողովրդին պահանջներուն, մինչև այսօր որոշ համոզում մը, գաղափար մը չունեցողի պէս, տակաւին նոր ելեր կը հարցնեն թէ՛ «ինչ կ'ուզեն որ զոհեն»...

Եթէ պատրաստ էին ժողովրդին ձայնին և պահանջներուն անսալու, ինչո՞ւ համար ի սէր ժողովրդին, ի սէր միութեան չի զոհեցին իրենց սկզբունքին մէկ կաթիլը, Արփարը՝

հոգ չէր թէ այդ անձը լինէր անմեղ մը կամ մեղաւոր մը, և մինչև այսօր ոտքի տակ կ'առնեն թշուառացած ժողովրդի մը ազատութեան համար պէտք եղած ամեն նուիրական սրբութիւն. — Արփարը, թէ ժողովրդի ազատութեան համար է իրենց «դաւանած ըսկզբունքները»: Եթէ ժողովրդի ազատութեան համար էր, պէտք էր իրենց ամբողջ ուշադրութիւնները լարուած ըլլային գործնական ճանապարհով՝ դէպի արտաքին թշնամին և ոչ թէ այդ արտաքին թշնամին դէմ գործնական կերպով գուրս եկող հերոսներուն ու հերոսուհիներուն ամբողջութիւնը նկատել իրեն փաստակար տարր, և ատենց կ'ազմակերպութիւնն ալ այնքան ատեն անպատուել նոյն խակ պաշտօնական օսկանով, «Մարտո»:

Եթէ իրենց բոլոր ջանքը նուիրուծ է յեղափոխական ծրագրէն ջնջել ներքին խնդիրները և ազգը բաժան բաժան ընող պատճառները, ինչո՞ւ համար մինչև այսօր իրենց բոլոր ջանքը նուիրած են անհատի մը պաշտպանութեանը և միւս կուսակցութեան հետ կը շարունակեն անվերջ հակառակութիւնը: Ինչպէս կրկին կը տեսնուի չորս սիւնակներէ բաղկացալ «բուէարկուած բանաձեւ»էն, որուն ամեն մէկ տողը, ամեն մէկ իմաստը վրան բաց հակառակութիւններ են, քան թէ՛ համերաշխութեան կամ համաձայնութեան հաւաստիք:

Ձի հակացուեցաւ թէ՛ մինչև այսօր ինչ էր «Հնչակեան կուսակցութեան դաւանած ըսկզբունքները», և ո՞րը պատրաստ է զոհել, չըսենք ի սէր Միութեան, որուն իրականացումը սոսկ երազ մըն է, այլ ժողովրդին մէջ արմատացած երկպառակութեան և յուսահատութեան պատճառներն դոնէ վերջնելու համար:

Այս տեսակ փափու՝ խնդրոյ մը մէջ ժողովրդին պահանջները ի գործ դնելու համար, ինչպէս պատրաստականութիւնը ցոյց կուտայ Հնչակեան կուսակցութիւնը կամ բանաձեւը բուէարկող ժողովը, նախ պէտք էր լաւ մը ուսումնասիրել ժողովրդին տրամադրութիւնները, անոր կ'ազմուածքը, դիտակցութիւնը և խառնուածքը, յետոյ անկաշառ և անաչառ ըլլալէ զատ, ինչ որ անհրաժեշտ պէտք է «կերականէ աւելի ազդեցիկ» ըլլալու համար, կտտարեալ յեղափոխականի դիտարկութիւնը և ընդարձակ համոթութիւնը ունենալ:

Բուէարկուած բանաձեւին հակառակորդ ողբին կը հետեւի որ, յանձնախումբը բոլորովին զուրկ է այս յատկութիւններէն, ուրիմ ինչպէս պիտի կարողանայ կռաւարել և դոհացում տալ, երբ ժողովրդի ամեն մէկ խաւերէն իրարու հակառակ և տարբեր պահանջներ ներկայանան: Օրինակի համար. խնդիրը հա-

Ռաժնեզնի փոխարէն ամեն երկրէ կընդունուի նամակագրոյժ (փուլ):

Ամեն անոնք՝ որ բաժանորդ կը գրուին և առաւաւելն երեք ամիսէն չեն վճարեր չորրորդ ամիսը թերթ չպիտի ստանան:

Լաքտարաւ առնելով կը տեսնենք որ, Ամերիկայի ժողովրդին պահանջները երբէք համապատասխան չեն Պալքանեան երկիրներու մէջ գտնուող հայ ժողովրդի պահանջներէն. նոյնպէս Եգիպտոսին՝ Հայաստանի ժողովրդէն և Կովկասի Հայասնը՝ Եւրոպայիէն:

Ամերիկայի ժողովուրդը՝ կռիւած լալանած աւաւ ազատութեան, կը պահանջէ այն՝ կարծելով թէ կրնան միւսներն ալ առանց իրարու գլուխ կոտրելու՝ պահանջել, — թող որ յեղափոխական գործի փափկանկատութիւններն ալ իրենց մեծ դերը ունին այս պահանջներուն մէջ:

Պալքանեան ժողովուրդն ալ կը պահանջէ որ պարզ մարդմեքներն իման իրենք՝ այս ինչ կամ այն ինչ անհատի աղքեցութեան տակ, հոգ չէ թէ լլան անոնք անկարող մը կամ խաչապող մը, վախառու մը կամ թաղական ազալ մը. միութեան վրայ իրենց ունեցած կարծիքը անոնց քմահաճոյքէն կ'ախում ունի:

Եգիպտոսի ժողովուրդն ալ, — մեծ մասամբ, պառփուաներ, — թէ և արտաքրուստ միութեան համար ձեացողներ և գործնականին մէջ բոլորովին հակառակող, ինչպէս ցոյց կուտան մի քանի կարեւոր դէպքեր, ատենք աւելի հարստութիւն դիզելու հակամէտ եղած են՝ քան թէ հայրենիք մը ազատելու հետամուտ, և որոնք աւելի գործնական կերպով Հնչակեան կուսակցութեան սկզբունքները ծախողներ են. կը պահանջեն որ Դաշնակցական կուսակցութիւնը կըլուի և գոյութիւնը դադրի:

Եւրոպայի ժողովուրդն ալ կը պահանջէ, որ քաղաքական միջոցներու դիմեն և սպասեն որ կարգը իրենց գալ . . . ոչնչանալուն:

Հայաստանի թշուառ ժողովուրդն ալ օգնութիւն կը պօռայ, օգնութիւն ազատուելու համար, իրեն հետ ներդաշնակ ձայնակից ունենալով որբեկներու աղեկտուր աղաղակը:

Կովկասի ժողովուրդն ալ կ'ուզէ որ իր խելացիները անցնին գործին զուլսը, անոնք տարածեն «սկզբունքը», անոնք ծրագրեն, և առանց վիճ բանալեան առարկայ ըլլալու միահամուռ ընդունելութիւն դոնէ ամենէն... որովհետեւ, իրենց կարծիքով ի տէալայաններ են, աստղերու հետ գործ չունին ինչպէս կ'ունենան բանաստեղծները. ատոնց աչքերը վարը են . . . սակայն ոչ թէ երկրիս երեսը, անկէ ալ վար . . . :

Այս պահանջները, ինչպէս կը տեսնուի, իրարու անհամապատասխան, և նոյն խակ իրարու թշնամի կը ներկայանան իրենց որոշ գոյներով, ու ունեցած են իրենց աղքեցութիւնը ներքին խռովութիւններուն վրայ, բայց ժողովուրդին կողմէ այնքան ուշադրութեան առարկայ չեն եղած՝ որքան ժողովրդին է՛ն

ազնիւ տարրին ձգտումներն ու զգացումներն սպաննող և զանոնք յուսահատութեան, պըժ-գանքի և փճացման ենթարկող խել մը դէպ-քերն ու իրողութիւնները, որոնք թէև իրար-մէ անշատ, բայց իրարու ոյժ ու ասպարէզ տալով գոյացուցին ներկայ խառնաշփոթ հո-սանքը՝ տեղի տալով խաչագողներու արշաւան-քին, ուսկից առաջ եկաւ ընդհանուր ըրող-քն ու տրտուեցը, ուղղեալ յեղափոխական մարմիններուն։ Սրտի անհուն դառնութեամբ պէտք է արձանագրել թէ այդ բողոքներուն ամենքն ալ անխիղճ մնացին։ Մամուլն սկսաւ մի առ մի մատնանիչ ընել։ Ժողովրդի ամեն խաւերէն պահանջեցին «ի սէր Աստուծոյ» վերջ մը տալ սա կեղտոտութիւններուն և ան-խիղճ խաչագողութիւններուն։ Աչք գոցել-բա-նալու չթողին խաչագողները, անմիջապէս վարպետ ձեւերով, կարողացան պաշտօնական չորանակներու մէջ սպրդել ու բուռն պայքար մղել անկեղծ՝ բայց միանգամայն ծախթ անձ-նաւորութեանց դէմ, որոնք ժողովրդի բողոք-ներուն վերջ մը տալու ջանքերով կ'ուզէին ներքին խռովութիւններու առաջըն առնել։ Ամեն ոք վարանեցաւ և սոսիւ մտով ետ քաշուե-ցաւ, թէ՛ զի մի գուցէ խաչագողներու ձեռքն անցած ըլլայ հայրենիքի փրկութեան գործին ղեկը, որ փոխանակ ժողովրդին սէր ու հա-մակրանք ներշնչելու՝ ելեր անվերջ հակառա-կութիւններ կը մղեն, ցոլացուցիչ խոստում-ներով և մեղրածոր գրականութեամբ։

Ժողովրդին չէղբացման և անոր յուսա-հատութեան պատճառները իր իսկական գոյ-նովը ներկայացնելէս յետոյ, որոնց անվերջա-նալի ձայները տակաւին կը լսուին ժողովր-դին ամեն մէկ անկիւնէն. ճակատաբաց և հա-մարձակութեամբ կրնանք ըսել որ՝ թէ՛ Հիւ, կուսակցութիւնը և թէ՛ Դաշնակցութիւնը չու-ղեցին բնաւ կարեւորութիւն տալ հանրութեան պահանջներուն և յանձն առնել խաչագողնե-րու և կեղտոտ գործիչներու մաքին պէտք ե-ղած զոհողութիւնները. ընդհակառակը՝ բա-նաձեւ ըրեցարկողները իրենց ժողովներով, յայտարարութիւններով կը շարունակեն հա-կառակութիւնը և Արփիարի պաշտպանութիւ-նը, որով արեւու պէս ցոյց կուտան թէ «իրենց դաւանած սկզբունքներէն կաթիլ մը զոհելու պատրաստ չեն. նոյն իսկ եթէ հայութիւնը ոչնչանայ, նոյնպէս Դաշնակցութիւնը չպիտի արտաքսէ քանի մը կոմիտէներու մէջ սպրդած ծախթ և միանգամայն «մատնանիչ» եղած (*) խաչագողները, կեղտոտները, փեսասկարները, որոնք թուրք պաշտօնեաներէն տարբերութիւն մը չունենալովն իրենց շուրջը կը հաւաքեն մարդամեքենաները, և ա մա խները, ու անոնցմով կը կազմեն ռէժիմը, ու կեր-պով մը ծանր նախատինք կ'ըլլան արժանա-պատուութիւն ունեցող մարմիններուն ալ։

Յեղափոխական կազմակերպութիւնները՝ նախ անաչաւ օրէնքի մը և սկզբունքի մը են-թարկելու էին իրենց ճարպիկ գործիչներուն և ներկայացուցիչներուն քայլերն ու գործունէութիւնները. ոչ թէ սանձարձակ լայն արտօնութիւններով անոնց բնականօրէն առարկայ ընելու էին հանրութեան սրտին և զգացումներուն հետ խօսող է՛ն նուիրական սրբութիւնները...

(*) «Դրօշակ» VIII տարի 1898 Յուն. 31 No. 1, (18)—28 սնտուկին և Տիկնանց մատնաճիւղին ականջը խօսի։

Արփիարի մը՝ գոյացած խառնաշփոթ հո-սանքէն օգտուած, թշուառ ժողովրդի մը ա-զատութենէն աւելի իր քսակը և անմահա-ցումը կը մտածէ, Վարդօ մը Դաշնակցութեան ծրագիրը առաձգական լատիկի պէս ձեռքին մէջ բռնած՝ Պալքանեան գաղութը բողոքեցը-նել կուտայ, և աւելի նախապատու կը հա-մարի ամեն տեսակ այլանդակութիւններու հերոսը ըլլալ, քան թէ ժողովրդին բողոքին ու պահաջին առջև տեղի տալ։

Էւհոն Մկրտիչեանի պէս պատուական ե-րիտասարդներ՝ Եգիպտոսի պուռժուաներու միամտութիւնը լաւ մը ուսումնասիրած՝ ու անոնց տրամագրութիւնները (օգտակար կամ փեսասկար) ձեռքին մէջ բռնած, ինչպէս օ-րէնքը բռնաւորին ձեռքին մէջ՝ (և համեմալ-խութեան կամ միութեան խիղճին ալ՝ բանա-ձեւը քուէարկող) ժողովի վստահութեան տակ) փոխանակ իր գտնուած միջաւայրին ժողո-վրդը յառաջդիմութեան և զարգացման ճամ-բուն մէջ ղեկու և անոնց լաւ յատկութիւն-ներէն ու ձգտումներէն հայրենիքի փրկութեան բաժին մը հանելու, փճացման կենթարկէ, կեղտոտ գիւնադիտակա՛ն և առաջնորդական խաղերով. մի միայն անձնական շահ և հաւ-գիտ սպաքայի մը համար... Ասդին ի սչա-գող մըն է, որ անվախ ու անարգել նստած՝ իր հաւը կը փնտռէ, անխիղճ մարդամեքենաներու լէզոնն է, որ չուղեր հիտակցութիւն ձեռք բերել և անով առաջ երթալ գաղափարի ճամ-բուն վրայ, միւս կողմը ուրիշ մըն է, որ իր գաղափի սրէ ճիւղը ձգա ունենը Ռուսոսգի մէջ թողած, գացած է մեռեալ մարմինը վերակեն-դանացիել՝ տարբեր շահու ակնկալութեամբ։

Այս խառնխուռն բայց տեսնուած տա-լաւէր աներու հանգէպ գուրս կուգայ, պաշտօնական սքեմով. ճիշդ մէջտեղը կը տըն-կուի բան աձեւը քուէարկող ժողովը, հան-գարտ ջուրի վրայ նստակ մը իսկ քայքայելու անկարող նստակցետի մը պէս, կը հրաւիրէ և անպայման կերպով կը պահանջէ որ իրեն ապաւինին, խօստանալով որ պահա-ջուած սկզբունքի զոհողութիւնները պիտի ընեն (? ? ?)։

Աղբայրն ժողովը, կամ լաւ ևս է ըսել Սրփիարի կուսակցութիւնը կրնայ մի հրապո-րակը մաքրել կեղծ աղբասէրներէն, խաչա-գողներէն, ղեղձանուներէն, կեղտոտներէն և օրինաւոր մարմնոյ մը յատուկ բարոյականով ցոյց տալ այն վստահութիւնը, որ կը պահան-ջուի հանրութեան կողմէ, որոշ տեսներու հա-մար կեղծը՝ անկեղծէն, հայրենասէրը՝ խա-չագողէն։

Այս զոհողութիւնը ընելու համար, նախ պէտք է «քար գալթակցութեան» մէջտեղէն վերցնել, Արփիարը հեռացնել. թող ըլլայ ան-մեղ մը կամ սուրբ մը. յետոյ իրենց կարգին պատմել, խայտառակել ամեն անոնք որ յե-ղափոխութիւն տեսալ մը ուռկան ըրին անձ-նական կալուածի պէս։

Ահա հոս է որ կը պահանջուի խիտ ա-նաչառութիւնը, նախ թող գոյանայ հաւաք սկան ոյժը, յետոյ թող ամբաստան-եալները կամ դառա պարտիսիները՝ ներկայա-նան հաւաքալիս՝ ոյժի դառսրանին առջև, թող հոնկից դոնեն իրենց անմեղութեան ար-դարացումը կամ պատիժը։ Այդ ոյժը գոյացը-նելու համար. «գաւաթ մը օղիի համար քուէ տուողի մը պէս» թող չհամակերպին, չխո-նարհին այս ինչ կամ այն ինչ մատնանիչ ե-ղողներուն. նոյն իսկ չյուսացուած ծակերէ

գուրս եկող խաչագողներու առջև. ապա թէ ոչ Ալիքսան Արզուեանի մը (*) անկեղծ հայ-րենասիրութիւնն ալ կրնայ ըլլալ որ ներկայ բողոքներուն և պաշտպաններուն համեմատ, տեղի ապ) և մարդամեքենայի կոծիքը գո-յացնէ հանրութեան առջև։ Մէկ կամ երկու անկեղծ գործիչներով ց ու ց ա հ ա ն դ է ս չըլլուիւր. Դաշնակցականներուն մէջ գործիչնե-րէ աւելի հերոսներ գուրս եկան, բայց ամեն-քըն ալ մարդամեքենաներ մնացին 28 սնտուկի և Տիկնանց մատնաճիւղէ խիղճներուն հան-գէպ... :

Ազգ. ժողովը եթէ անձեռնհաս է բաւա-րարութիւն տալ, աւելի լու է որ ժողովուրդը ինքն իր ձեռքով կարգադրէ և գոյացնէ այդ բաղձալի ոյժը, քան թէ խարուսիկ խոստում-ներով, ձեւակերպութիւններով և շլացուցիչ ժողովներով առաջնորդել և տանիլ ձգել ներ-կայ պժգալի դրութեանէն աւելի վստահաւոր և անեղանելի տոպրակի մը մէջ, որուն բե-րանը իսկոյն գոցելու և խղբելու համար բրո-նած են այս անգամ ալ Մարտականներուն պետերը։

ՈՍՏԻԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻ ԿՍՑՈՒԹԻՆՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒՍԾ ՀՍՄԱԳՈՐԾԱՐ ԺՈՂՈՎԸ

... Խմբագիր,

Համագումար ժողովի մասին կարծիքս ուղած էք. կարծիքս շատ աննպատու է այդ մասին. ինչ լաւ ծախթ են մեր կուսակցա-կան կազմակերպութիւնները և անոնց պատ-կանող անձնաւորութեանց մեծագոյն մասին նկարագրելը. հետեւապէս սկիզբէն ես հա-ւատք չունէի այդ համագումար ժողովին վը-րայ և այդ պատճառով ալ չուսումնասիրեի սկզբունքս է դրական և իրականայի բանե-րուն հետամուտ լինիլ և հաւատք ունենալ. համագումար ժողովին արդիւնքին վրայ հա-ւատք չունիմ, ի գատ ըսի ըսաւներու մեծ դուռ. պիտի բացուի Անշուտ փաստեր ու ապացոյցներ կ'ուզէք, ահա՛։

1— Այժմ՝ ըստ երեւոյթին՝ գործող զօ-րաւոր կուսակցութիւնը Դաշնակցութիւնն է, այս պա բազան թշնամիներն ալ չեն կարող ուրանալ։

2— Հնչական կուսակցութիւնը տակաւ-ւին նոր վերածնութիւն ստանալու վիճակի մը մէջ կը գտնուի, յայտնի ոյժ մը չներկա-յացներ ներկայիս, և մանաւանդ ծախթ և հին բազ զախնդիրներէն չատելը մուտ գտած են այդ կուսակցութեան մէջ, նոյն իսկ խմբ-բազրական-կեղրոնական մարմինը շատ խեղ-ճուկ վիճակ մը կը ներկայացնէ, դեռ այս մա-սին «Շարժում»ի մէջ վերջերս զրաժներս։

3— Մարտականները՝ պ ա լ ը բ պ ա շ -տ ա ն ք օ ք ա Ր թրքալի ան առածին համեմատ միայն խօսքով յեղափոխականներ են, ափսոս է նոյն իսկ յեղափոխական անունը տալ ա-նոնց, որոնք յանդգնութիւնն ու մատնութիւ-նը ունեցած են իրենց օրկաններուն մէջ քա-րողել հակայեղափոխական գաղափարներ և տարբեր կուսակցութեան մը գործունէութիւ-նը արգիլել դատապարտելի և սպօրիտի մի-

(*) Ա. Արզուեան անկեղծ հայրենասէր մը ըլլալը ռէքլամի կարօտ էր. զինքը ամենքն ալ կը ճանչնան։

ընդհանրությամբ, անհուններ մատնելով, իբրև դաւաճաններ սպանել թելադրելով:

Արմենականները — միայն իրենց վաճառականական ծրագրով, մանաւանդ որ կուսակցութիւն կոչուելու արժանի ոյժ մը չեն ներկայացներ, իրենց օրկանը համարուող (Արմենիայի թերթը մինչև այսօր բաժանորդագրելով կը տրուի, նոյն իսկ իր ծախքը գոցելու նիւթական աջակցութիւնը չի դնեն իր համախոհներէն, ինչ տեսակ կուսակցութիւն է այն, որ իր նմաններուն պէս (Դրօշակ, Հնչակ, Մարտ) իր օրկանը ձրիաբար հասարակութեան չէ կարող ցրուել:

5 — Չէ զոք մաս մըն ալ կայ, որուն վրայ վերջերս շատ խօսիլ սկսան: Այս չէ — զոքները մի անգամ ընդ միշտ ջուրը տուր... Ազգին այս տաղնապալի ու փոթորկալից վիճակին մէջ ինչ կը նշանակէ չէզոքը, եթէ ոչ անտարբերներ...: Ինչ, անտարբերներն ալ գործի՞ պիտի միջամտեն, և ինչ իրաւունքով, արդե՞ք իրենց մինչև ցարդ անտարբեր մնալուն ամօթի՞ իրաւունքովը (*):

Արդ, հիմայ պատասխանեցէ՛ք ինձ, այս յիշածներս չեն, որ համադրմամբ ժողովը պիտի կազմեն:

Յեղ. գործին մասնակցելու իրաւունքէն բնական օրէնքով զրկուած են 3-4-5 թիւերով նշանակածներս, ասոնց կարծիքն ու խորհուրդը որ և է կերպով օգտակար չըլլար, որովհետեւ իրենց գոյութիւնը լոկ երեւոյթական է և արհեստական, Հայկ. խնդրին բնական պահանջներուն չի համապատասխաներ, մինչև ցարդ Ս. Գործի համար ոչ մի պատրաստութիւն տեսած են, խօսքով ոչ թէ գործով յեղափոխականներ են, լոկ անուանական կուսակցութիւններ:

Ուրեմն, կը մնայ երկու՝ 1-2 կուսակցութիւնը, այս պարագային ալ համադրմամբ ժողով կազմելու պէտքը այնքան զգալի չէ. եթէ վերածնեալ Հնչ կուսակցութիւնը յաջողի իր գոյութիւնը հաստատ հիմերու վրայ դնել և իսկական գործի սկսիլ, այն ժամանակ շատ բնական կերպով և հեշտօրէն Դաշնակցութեան և իրենց մէջ համերաշխութեան միացեալ ծրագիր մը կը գոյանայ:

Միութեան խնդրոյ՝ վրայ առջին յօդուածովս իսկ յայտնեցի իմ յոռետես գաղափարներս ու համոզումներս, անկէ ի վեր 5 տարի անցած է, փորձերը եկան հաստատեցին իմ կարծիքը, նոյն յոռետեսութիւնը ունիմ նաև համադրմամբ ժողովի մասին:

Ոյժ տուէք ամենէն ուժեղ կուսակցութեան, ճիշդ որիցէք զայն, ահա միակ միջոցը ձեր երաւած զօրաւոր և նպատակայարմար կուսակցութիւնը կազմելու:

ԹԱՓԱՌԻԿ

Դաւրէժ, 15 Մարտ 1909

(*) Ըստ մեզ ուրախաւիթ երեւոյթ մըն է, որ Չէ զոք ներս իրենց անտարբերութեան քննէ սթափած՝ չեն ուզեր այլևս լոկ հանդիսատեսներ ըլլալ հանդէպ ազգին այս ճգնաժամին. ներկայ և ապագայ գործունէութեան համար շատ ընդարձակ է ասպարէզը, հետեւաբար Չէ զոք ներս ալ «մի անգամ ընդ միշտ ջուրը տուր» ըսելով, չէ կարելի արհամարհել այդ ոյժերը, որոնք կուսակցութեանց հետ հաւասար իրաւունք պիտի չահին, երբ զրականապէս ապացուցանեն իրենց գործնական արժանիքը: Սիրելի է մեզ յուսալ, որ մեն մի Հայ անհատ իր ուսման նուիրէ ազատութեան սուրբ Գործին: Մ. Խ.

Տ Ի Պ Ա Ր Թ Ա Ղ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Բ Դ Ը

ՏՈՊՐԻՉ, 14 Մարտ 1901

Ընթերցողը անշուշտ ներողամիտ պիտի ըլլայ ինձ՝ երբ մի քիչ պատկերացնեմ այստեղ մեր փոքրիկ քաղաքի ազգային կեանքը:

Մենք՝ հոս քիչուր չենք, եկուր թէ տեղացի 70 տունի մը չափ հայ, մենք ուրիշներուն հետ կուսակցութիւններու բաժնուած չենք. յեղափոխութիւն, ընթերցարան, լսարան, որբայնամ և այլն և այլն, այս տեսակ պօռ. բաներու կ ու տ մը չենք տար, ունինք մեր եկեղեցին՝ ուր կը պաշտօնավարէ «ալաքէյֆինէ» տէր-պապա մը. վարժարան մը որուն ղեկը յանձնած ենք մեր վարժապետը՝ համապատասխանող չիք-միսիւ մը, թաղական խորհուրդ, հոգաբարձութիւն չկարծես թէ չունինք. օ, անոնք այլևս անյարմար կը տեսնեն ազգային գործերը, եկեղեցւոյ չըլլալով մէջ եղած փոքրիկ խցիկին մէջ կարգադրել, և յիմարութիւն չպիտի ըլլար այդ անպաճոյճ նեղ խոնաւ խցիկին մէջ գլուխ պայթեցնել քանի որ հիմա եւրոպական ոճով շինուած Բագոսի տաճարներ կան, բայց մի տարակուսիք, մենք մեր քուէն պարապ չենք նետեր պապամ, մեր նորընտիր թաղական աղաները բարեկենդանի չաբաժնեցուն, իրենց արդիւնաւատ նիստերը շարունակեցին, այդ գեղեցիկաչէն տաճարներէն մէկուն մէջ, եթէ կ'ուզենք քիչի թուեմ անոնց օրակարգի նիւթերը: Ա.—Բողոքականի մը ամուսնութիւնը, լուսաւորչական օրիորդի մը հետ, Բ.—եկուր Հայերուն (մանաւանդ Պօլսեցիներուն) լաւ դաս մը տալ, ճանչցնելով իրենց չափը, Գ.—կըռքամարտութեան փորձ մը ընել, Դ.—քիչ մը արիւն առնել իրենց ճակատներէն, ասորիւ լուծելով հասկնալու համար թէ՛ արդեօք կը նմանի՞ բարեկենդանի հինգչաթին զոհուող նահապաղներու արիւնին թէ փոխուած է, Ե.—

օտարներու և ազգակիցներու ներկայութեանը՝ հայհոյանքներու մրցում մը կատարել:

Ձըլլայ որ մաղի չափ տարակուսէք. այս խնդիրները վիճաբանութեան գրուելով կարգադրուեցան, և հիմայ՝ մեր այդ ազգանուէր թաղական աղաները, զբաղած են երկու խնդրով, առաջին՝ դատարանի միջոցաւ ի կարգ բերել Պօլսեցիները, երկրորդ՝ լրագրութեան մէջ փնտռել այն սրբիկները, որ յանդգնած են քննադատել իրենց հաճի-աղայական արարքները: Պարտաւոր եմ նաև խոստովանիլ թէ մեր թաղական աղաները կեղծելու արհեստին մէջ ալ շատ ճարպիկ են. որովհետեւ իրենց թերով իսկ վկայեցին թէ՛ իրենք թէ և եկուր հայերը հայու տեղ զրած չեն, սակայն ազգ. տուրք առնելու համար միշտ կը կեղծեն: Արդ սիրելի ընթերցող, չըլլայ որ նախանձիւս մեր վրայ, կրնայ ըլլալ օր մը Աստուած ձեզ ալ կուտայ այս տեսակ փորձանք թաղականներ, որոնք պաշտօնական կերպով ունիլ կը ճիշդաւորեն երկպառակութիւնները,

ԽԱՅԹՈՑ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԵՆ

ԹԱԻՐԻՉ, 15/28 Մարտ 1901

Արդէն ընթերցող Հայ հասարակութեան յայտնի է որ ամենայն Հայոց վեհափառ Կաթողիկոսը արտօնութիւն չնորհած է Ատրպա-

տականի Հայոց որ այսուհետեւ թեմի առաջնորդը պէտք է ընտրուի ամբողջ ժողովրդի քուէարկութեամբ, որը մինչև այս օր գոյսեթիւն չունէր: Արդէն սա մեծ շնորհ մըն է մեզի համար, և եթէ մենք Ատրպատականի Հայերս՝ կարողանայինք օգտուիլ ասկէ, ընտրելով այնպիսի առաջնորդներ, որոնք ծանօթ լինելով տեղիս գործերուն և կարողանային կառավարել ժողովուրդը: Այլատեսան եպիսկոպոսը կարգաց Ղսլայի եկեղեցիին մէջ այս վերոյիշեալ կոնդակը՝ և աւելցուց, որ ժողովուրդը չուտով ձեռնարկէ ընտրութեան, որովհետեւ ինքը պատրաստ է մեկնելու, բայց մինչև հիմայ դեռ ընտրութիւն տեղի չունեցաւ. իսկ ե՞րբ պիտի ըլլայ, ատիկա միայն Ալլահը գիտէ:

Եղանակներն այս տեղ գարնանային են, ծառերն արդէն ծաղկած են, այս աարի բերքը լաւ է և յուսալի է որ առաւելութիւն կը լինի. հացը արդէն բաւական աժան է և մատչելի ժողովուրդին:

Երկու տարիէն աւելի է, որ հոռ կը խօսուէր թէ ռուսական դրամատուն մը պիտի հիմնուի, վըջադէս անցեալ ամսու սկիզբը այստեղ հասան դրամատան կառավարչները, որոնք արդէն սկսած են նորոգել Imperial bank of Persiaի շինութիւնը, և կ'ըսուի թէ ապրիլ 1ին պիտի սկսին գործողութիւնը: Banque de Prêt այս է նոր դրամատան անունը, ճիշդ Ռուսաց պետական դրամատան ճիւղն է, բայց թէ ինչո՞ւ համար իր անունը փոխած է, որովհետեւ այստեղ գոյութիւն ունեցող The Imperial Bank of Persia-ն թոյլ չի տար որ մի ուրիշ Imperial դրամատուն գոյութիւն ունենայ պտրսկաւտանի մէջ, և Imperial անունը պէտք է իրեն վերապահուած ըլլայ. banque de prêt չուտով մասնաճիւղեր պիտի բանայ Պարսկաստանի նշանաւոր քաղաքներուն մէջ:

Արդէն ներկայ տարւոյս Յունուար 1ին (ը ե.) Պարսից կառավարութիւնը չըջաբերութեան հանեց նոր nickel դրամներ, պղինձ դրամի փոխարէն, որոնք շատ թեթեւ և գեղեցիկ են, այնպէս որ կարելի է մի քանի դրամներ զրպանի մէջ կրել, առանց ծանրութիւն զգալու, ու կառավարութիւնը շարունակաբար շարքաբերութեան մէջ կը դնէ նիքէլները Imperial դրամատան միջոցաւ, չգիտենք թէ ի՞նչ պիտի ըլլան մեծ սև դրամները:

Այս տարի մի քանի թատրոններ ունեցանք, որոնք բոլորն ալ գրեթէ լաւ պատրաստուած էին: Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկ. կը պատրաստուի ներկայացում մը տալ. մա նրամասնութիւնը հետեւեալ անգամ:

ԲԱԿՐԱՏՈՒՆԻ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳՈՐԾԱԾՈՒՄՆ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄԵՐՈՒ
(Timbres-Poste pour collections)

Պատիւ ունինք ծանուցանել Հայ Հասարակութեան մեր նոր գրասենեակը, ուր պատրաստ ենք փափաքողներու ամենայն դիւրամաշնչի գներով հայթայթել ամեն տեսակ նամակադրոշմներ նամանաւանդ հեղինականներ, որոնց մասին աւելի մասնագիտութիւն և ճիշ հաւաքածոյներ ո սինք:

Փափագողը դիմեն հետեւեալ հասցէին:

Agop Garabedian et C^{ie}

12, Rue de Stade 12,

Athènes (Grèce)

Մեր վաղեմի ընկերներէն պ. Զ. Ա. զատեանի
ի լոյս հանած Մայր Աթոքսի նկարով հայ-
կական Carte Postale-ները մեծ ընդունելութիւն
գտնելով՝ այս անգամ ալ հոս ղեկավարած ՆՇԱ-
ՆԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ գեղեցիկ դիրքով և մաքուր
տպագրութեամբ քաղաքի հրապարակ հաներ է:

Արդարեւ գովեստից արժանի է հայ ար-
ուեստագիտին սոյն ձեռնարկը, որ եղական
երեւոյթով մը կուգայ մեր սրտին մէջ թարմ
պահել ազգային փառքի յիշատակները:

Բառերը լոնտոնալ փափագողք թող զի-
մեն առ H. Azadian, rue Bole No 128
Athènes (Grèce)



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-ԼՍԱՐԱՆ Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ի Ո Յ

Շնորհակալութեամբ ստացանք Աղեքեան-
գրիչի «Ժողովրդային Մատենադարան-Լսարա-
ն»-ի 1900 թուականի տարեկան Տեղեկագիրը,
չորրորդ կը տեղեկանանք թէ ընկերութիւնը
կազմուած է 1899 Ապրիլին, յաջորդ և ժա-
ռանգորդ եղած է «Ժողովրդական Գրադարան
-Ընթերցարան»-ին, անցեալ տարի մուտք ու-
նեցած է եզրագրական ողջ գրամով 12,679
դր. (որուն 2759 25ը փոխառութիւն է)
և 11798,75 դր. եւր, որով 1901 յոյնուար
1ին սնտուկը պատրաստ մնացած է870,25 դր.:

Գրադարանը կ'ստանայ 29 թերթ և հանդէս
հայերէն, ֆրանսերէն և թիւրքերէն լեզուներ-
ով: Մենի 543 կտոր քիւրք որոնցմէ զատ 30
կտոր նոր գիրքեր ալ ապսպրուած են անցեալ
տարեւրջանի վերջը:

Անցեալ տարեւրջանի ընթացքին մէջ 281
ընթերցողներ օգտուել են գրադարանէն, կար-
գալով 2879 գիրք, չհաշուելով ձեռքէ ձեռք
կարդացուածները՝ որոնք ոչ նմազ թիւ մը
կը կազմեն: Ամենէն շատ կարդացուած գիր-
քերն ընդհանուր և մանկական գիրքերն եղած
են: Ամենէն շատ գիրք կարդացողները, միւս
դասակարգերու բաղադրութեամբ աշակերտներն
(81 հոգի) ձգած են, որոնք կարդացած են
1203 գիրք, իսկ արհեստավորներ (52 հոգի)
կարդացած են 440 գիրք, գործավորները (24
հոգի) կարդացած են 395, Ընթերցող 81 ա-
շակերտներէն 26ը օրիւրդ են՝ օրական միջին
հաշուով՝ 20 մարդ յաճախած և մատենադարան
կարդալու համար:

Անցած տարեւրջանի մէջ 10 քանախօսու-
թիւն եղած է լսարանին մէջ, ազգային, քա-
ղաքական, տնտեսական և ընտանեկան նի-
թերու վրայ: Գիշերային դասախօսութիւններ
եղած են ֆրանսերէնի, թուրքերէնի, հաշուա-
կանութեան և զմաղրութեան, 15 ա-
շակերտ հետեւած են այդ դասերուն:

Վարչութիւնը՝ գործին աւելի մղում և
ընդարձակութիւն տալու համար, էկզորնա-
կան տեղ մը ընդարձակ չէնք մը վարձել և
նոր կարգադրութիւններ ըրած է, որով ըս-
տիպուած է փոխառութիւն ընել:

Հաշիւները մանրամասնօրէն և ծանօթու-
թիւններ տրուելով հրատարակուած են Տեղե-
կագիրն մէջ:

Կը կարծենք թէ՝ անօգուտ չէր ըլլար այդ
Տեղեկագիրն մէջ զետեղել նաեւ «Ժողովրդային
Մատենադարան-Լսարան»-ի կազմական կանո-
նադիրը, առելի որոշ տեղեկութիւն մը տալու
համար այդ հաստատութեան վրայ:

Ցաւակոյ իմացանք նաեւ Տեղեկագիրէն թէ՝

անցեալ տարւոյ ընթացքին մէջ բաժանորդա-
գրուած 131 անձերէն շատեր մի բանի ամիս
միայն վճարելէ յետոյ՝ զանազան պատճառ-
ներով դադարեցած են իրենց բաժանորդա-
գրութիւնը, (ինչ որ անսովոր բան մը չէ մեր
ազգային հաստատութեանց մէջ), և այժմ 70ի
մօտ բաժանորդ միայն կարելի է հաշուել,
որոնցմէ կը գոյանայ ամիսը 350 դրուէ ողջ:

Սիրելի է յուսալ, որ այս նոր տարւոյ մէջ
աւելի խրախոյս և աջակցութիւն կը գտնէ այս
օգտակար հաստատութիւնը:

„Հ Ա Ն Դ Ե Ս“ ՍՕՑԵԱԼԻՍՏԱՆԱՆ ՕՐԳԱՆ

Տնտեսական-քաղաքական-հասարակական
Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Բաժանորդագրութեան պայմաններն են,
Ամերիկայ, տարեկան՝ 3, վեցամսեան 2,
երեք ամս. 1 1/2 Տալ. մէկ թիւը 30 սենթ:
—Ռուսաստան, տարեկան 6, վեց ամս. 4,
երեք ամս. 2 1/2 ռուպլ. մէկ թիւը 80 կոպ.
—Թուրքիա, եգիպտոս, Եւրոպա և այլ երկիր-
ներ՝ տար. 15: վեց ամս. 8, երեք ամս. 4 1/2
ֆր. մէկ թիւը 1 1/2 ֆր.

Ամսաթիւները կ'օգտագործուի մի միայն բա-
ժանորդներուն: Բաժնեգիրը կ'ա ն ի ի կ է:
Թղթակցութիւնք և դրամ խրկել առ՝
M. F. Wander, réfaction du «Handès»
(Genève Suisse)

Գ Ո Ւ Թ Ա Ն Հ Ա Ն Դ Ե Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Հողագործական-Գիտական և Արուեստագիտական
Տիրար Գարեգին Գ. մեծատուրեք սնի խըմ-
բագրութեամբ հրատարակուելով սկսած է Բա-
րիդի մէջ հայ երկրագործութեան նպաստող
այս արդիւնաշատ հանդէսը, որ ստաջին ան-
գամ ըլլալով կը հրատարակուի հայերուս մէջ:
«Գոթական» յարգելի հրատարակիչը, իր այս
գործով մեծ ծառայութիւն մը պիտի մատու-
ցանէ հայ ժողովրդին: Ի սրտէ յաջողութիւն
և յարատեւութիւն մաղթելով՝ ջերմապէս կ'Ե
յանձնարարենք հայ հասարակութեան, որ
փութայ օգտուել յոյն արդիւնաշատ հրատա-
րակութեանէն:

Տարեկան բաժնեգիրն է Թուրքիա ֆր. 10
» » Արաւսահման » 12
» » Ռուսաստան ռուպլ. 6
Յօդուած, նամակ և բաժնեգիր խրկել
Տնօրէնի հետեւեալ հասցէին՝
Mr K. Medzadourian, 23, rue Collégiale
Parsis

Դրօշակի վերջին թիւը նուիրուած էր Դաշ-
նակցութեան տառնամայ գործունէութեան
և կը պարունակէ նահատակուած հերոսներու
նկարները:

Շնորհակալութեամբ ստացած ենք Գաւի-
րէի ՀԱՅ ՈՐԲԱՍԻՐԱՅ Ընկերութեան կանո-
նադրութիւնը, որ բաղկացած է 29 յօդուած-
ներէ և ուր ուրուագծուած է խիստ ընտիր
կարծադրութեամբ Որբասիրաց Ընկ. գործառ-
նութեան իդանակները:

Կանոնագրի առաջին յօդուածով կը տեղե-
կանանք թէ՝ Ընկերութիւնը հիմնուած է Ա-
րաբկիր քաղաքէն ու չըջակայքէն, առանց
զաւանթի խորութեան՝ երկուստէս՝ սրբա-
պաշտպանել ու դաստիարակել տալու նպա-
տակաւ: Արաբկիրի կամ ուրիշ յարմարագոյն
Որբանոցի մը մէջ, մինչև որ լրանայ իր հիմ-
նարկութեան Ա. չըջանը, որ 5 տարի է, ըս-
կսեալ 1 մայիս 1899է-

Լ Ո Ւ Ր Ե Ր

ԶԱՐԻՆ ՀՐԱԺԱՐԿԱՆԸ.— Ռուսիոյ Զարը
վերջերս պատահած ներքին խռովութիւններէն
զղածուած՝ զահէն հրաժարելու բաղձանք
յայտնած է. հախառակ պոլատական բարձր-
աստիճան անձնաւորութեանց թախանձանք-
ներուն անդրդուելի մնացած է իր որոշման
մէջ, բայց կ'ըսուի թէ իր մօր Մարիա Թէօ-
տորովի բաղձանաց համաձայն զիջում ըրեր է
առժամայէս մնալ զահուն վրայ:

ԲԱՐԻՉԻ «Թան» լրագրէն կը տեղեկա-
նանք թէ Էտուարտ Է Անգլիոյ թագաւորը
Աթէնք պիտի այցելէ:

ՄԻԼՏԷՆՊՈԼԿԻ մօտ Պօէր զօրավար Պօ-
քսպուր, անձեւատուր եղած է անգլիացիներ-
ուն 106 մարդով, բազում կառքերով և ռազ-
մամթերքներով:

ՊԵՆՍՏԱՆ.— Նոր խռովութիւններ կը
գուշակուի Մանչուրիի մօտ, չինական զօր-
քերը լաւ դիրքեր բռնած են քուսի 30 թըն-
դանօթով և մովզերեան հրացաններով զին-
եալ, 1200 հոգի ռուսիստուէի մօտ, 6000
հոգի ռուսի մօտ, 3000 ռուսիստուէի զինեցը:

Ռուս ծովակալ Ալէքսիէֆը՝ պատրաստած
խրկել այդ կէտերու վրայ, Չէփէնսկի զօրա-
վարի հրամանին տակ գտնուած զօրքերը:

ԼՈՆՏՈՆԷՆ կը հեռագրեն ապրիլ 19
թուականով՝ որ, Թրանսլալի մէջ գեա կը
չարունակուի քիչ շատ կարեւորութիւն ու-
նեցող պատերազմներ, լաւատեսները այս-
չափ յուսախաբութիւններէ վերջ, կը նկա-
տէին թէ կռիւը վերջացած է, սակայն ու-
րիշները կը կարծեն թէ տակաւին հին պատ-
մութիւնն է որ կը շարունակուի, թէ՛ ամէն
օր անգլիացոց Պօէրներէն բռնած գերիները
ուրիշ բան չեն, բայց եթէ խաղաղ ու ծա-
մարդեր: «Տէյլինի» թղթակիչը կը պնդէ թէ
անոյլ. զօրաբանակը իր ձեռքով վերջացուց
ւակայն առանց կարեւոր հետեւանք մը ձեռք
բերելու:

Աղամանդներու թագաւոր՝ Սէսիլ Բոտս,
որուն թիւագրութեամբ այս անիրաւ կռիւը
տեղի ունեցաւ, քիչ մնաց գերի բռնուելու քա-
ղաքի Պօէրներէն, որ եր ամբողջի գծին տակ
տկան պատրաստած էին, կառախուսքի ըն-
թացքը կասեցնելով զայն գերի բռնելու հա-
մար, բայց կառաչարը որոշեալ տեղը համեմէ-
առաջ պայթումը տեղի կ'ունենայ, որով մե-
քենաւորը անմիջապէս կը կեցնէ վայրաւարժ
և այսպէսով Սէսիլ Բոտս կ'ազատուի:

Դժբաղդաբար ժամանակէ մը ի վեր
«Մի ութիւն» Տնօրէն-Սմբաւելը հիւանդ ըլ-
լալով, թեր թիւ հրատարակութիւնը ուղացաւ:
ԳՐԱԾԱՐԸ





